# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեմա՝**

**«Խոսք և հաղորդակցության»**

**ժամերը մայրենիի դասընթացում**


**Հետազոտող՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՁԱՎԵՆԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

**Երևանի հ. 38 հիմնական դպրոց ՊՈԱԿ**

**Ղեկավար՝ Ե. Ջիլավյան**


**ԵՐԵՎԱՆ 2023թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …….....… 3**

**ԻՆՉ Է ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ …….....… 6**

**ԼԵԶՈՒ և ԽՈՍՔ …….....….....8**

**«ԽՈՍՔ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ» ԺԱՄԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ..10**

**ՇՓՈՒՄ…….....…….....… 12**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....……..... 26**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..... 27**

# ***ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ***

Տարրական կրթության դերը հանրակրթության համակարգում անգնահատելի է, քանի որ այս օղակում է դրվում ողջ կրթական համակարգի հիմքը:

Ուսուցման այս օղակը ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք տարբերակում են մտցնում տարրական կրթության և հանրակրթության հետագա մյուս փուլերի միջև: Այս փուլում է տեղի ունենում ուսումնական հմտությունների, այսինքն՝ որոշակի ուսումնական գործողությունների, ինչպես նաև ճանաչողական հետաքրքրությունների և դրդապատճառների ձևավորումը:

Այս տարիքային փուլին բնորոշ է նաև այն, որ ի հայտ է գալիս շրջապատող մարդկանց, իր և բարոյաէթիկական նորմաների մասին պատկերացումների բավականին գիտակցված համակարգ, որի հիման վրա էլ աշակերտն կառուցում է հասակակիցների և մեծահասակների, ծանոթ և օտար մարդկանց հետ իր հարաբերությունները: Այս հարաբերություններն էլ ձևավորվում են հաղորդակցման միջոցով:

**Ժամանակակից ուսուցում:** Այսօր հասարակական կյանքի արագընթաց փոփոխություններն անձից պահանջում են ցանկացած իրավիճակում ճկուն գործելու, ծագող խնդիրները հաղորդակցվելու միջոցով լուծելու հմտություններ:

Ուստի կրթական համակարգում խիստ կարևորվում է սովորողների ակտիվ ճանաչողական, խոսք և հաղորդակցում վարելու կարողության ձևավորումը: Այս է պատճառը, որ ներկայումս բավականին ժամանակակից է կրտսեր դպրոցականների խոսքի և հաղորդակցման գործունեությանը նպաստող մտավոր կարողությունների զարգացմանը միտված հնարների որոնման խնդիրը: Ընդ որում, այդ գործունեությունը կարող է ծավալվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբի համագործակցությամբ: Տարրական դպրոցում են ձևավորվում

աշակերտի անձի բազմաթիվ որակները, այդ թվում՝ նրա հաղորդակցումը: Այս կարողության ձևավորման միջոցներից են խոսքը և հաղորդակցումը: Ժամանակակից ուսուցման հիմնական նպատակն է՝ ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և այն կիրառելու կարողություններ: Խոսքի և հաղորդակցման կարողությունները պայմանավորված են անձնային որոշակի որակներով: Եթե վաղ տարիքում աշակերտի հաղորդակցական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ խոսքի և հաղորդակցման գործունեության մեջ: Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում խոսքի և հաղորդակցամն միջոցով կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորման հիմնախնդրի պայմանավորված է նրանով, որ կապակցված խոսքի կառուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի խոսքի և հաղորդակցմանը, մտքի թռիչքին, որն էլ իր հերթին հետագայում կրտսեր դպրոցականի մոտ վերածվում է կարողունակության:

**Ուսումնասիրության նպատակն է՝**

1.Զարգացնել մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունները,

2.Ստեղծել լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության, աշխարհահայացքային պատկերացումների հիմքեր,

3. Իրականացնել լեզվի հաղորդակցական գործառույթը,

4.Ձևավորել մայրենիով գրագետ և արդյունավետ հաղորդակցվելու կարողունակությունները,

5. Ձևավորել աշխատանքային նախնական հմտություններ,

6. Ձևավորել բարեկիրթ վարք և կայուն արժեհամակարգի հիմքեր:

***Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար հարկ է լուծել հետևյալ խնդիրները՝***

1. Ձևավորել կապակցված խոսքի հմտություններ,
2. Հարստացնել բառապաշարը և մշակել աշակերտների խոսքի քերականական կառուցվածքը՝ խոսքային իրավիճակին համապատասխան ճիշտ, արտահայտիչ լեզվական միջոցների ընտրության պահանջով,
3. Ուսուցանել լեզվական կանոնները և դրանց նպատակահարմար ու տեղին գործածությունը կախված խոսքային իրավիճակից,
4. Իմաստավորել որոշակի արժեքներ,
5. Ծանոթացնել սեփական հույզերին,
6. Ծանոթացնել սեփական իրավունքներին և պարտականություններին,
7. Ճանաչել դիմացինի իրավունքներն ու պարտականությունները:

# ***Ի՞ՆՉ Է ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ***

Հաղորդակցությունը տեղեկատվության փոխանցումն է մարդուց մարդ. բազմաշերտ գործընթաց, որը ենթադրում է և անձերի,և մարդկային խմբերի միջև շփման զարգացում: Հաղորդակցության խնդիրներին առնչվում են մարդկային գործունեության տարբեր բնագավառների մասնագետներ, դրանով իսկ պայմանավորված հաղորդակցության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ամենաարդիական ու կենսական խնդիրների թվին : Հաղորդակցման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ, հույզեր և այլն: Ինչպես ժամանակին ճշմարտացիորեն արտահայտվել է Ջոն Ռոկֆելլերը.

Մարդկանց հետ հաղորդակցման ունակությունը նույնպիսի ապրանք է, ինչպիսիք են շաքարն ու սուրճը: Ես պատրաստ եմ այդ ունակության համար վճարել ավելի քան այս աշխարհի որևէ այլ ապրանքի համար:

Ընդգծենք, որ վերջին տարիներին մանավանդ գործատուները նախապատվություն են տալիս այն աշխատողներին, ովքեր բացի մասնագիտական գիտելիքներից ու կարողություններից տիրապետում են նաև հաղորդակցման հմտություններին:

Լեզուն, լինելով հաղորդակցության միջոց, արտացոլում է մարդկանց մտածելակերպը: Եվ կարելի է համարել բնական, որ հիշյալ բառը տարբեր ազգեր յուրովի են կիրառել՝ դրան ինքնատիպ նշանակություն վերագրելով: Իսկ ի՞նչ է նշակում կարողանալ հաղորդակցվել .

Այն նշանակում է ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները՝ նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել: Տեղեկություն հաղորդողն ընտրում է փոխանցվելիք միտքը, գաղափարը,

ձևակերպելով ծածկագրելով խոսքային հաղորդկցման միջոցների օգնությամբ և հաղորդում պատասխանը:

Ընդունված է համարել, որ հաղորդակցման ընթացքում տեղեկության 35 տոկոսը փոխանցվում է խոսքային, իսկ 65 տոկոսը՝ ոչ խոսքային ճանապարհով: Խոսքային ուղիով փոխանցվում է «մաքուր» տեղեկատվություն, իսկ ոչ խոսքայինով՝ վերաբերմունք: Մարդու ոչ խոսակցական վարքն անքակտելիորեն կապված է նրա հոգեկան վիճակի հետ և դրանով իսկ կարող է բացահայտել անհատի ներաշխարհը: Հաղորդակցման հիմնական նպատակը տեղեկատվության փոխանցումն է, որը կարող է կատարվել զանազան ձևերով: Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթաց է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով/ժեստեր/, դեմքի արտահայտություններով, խոսքով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլ եղանակներով: Այսպիսով, հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխնեգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի,գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում:

Հաղորդակցումը կազմված է չորս հիմնական տարրերից՝ աղբյուր, կոդավորում, ուղի ( միջոց), հաղորդում, ընդունող.



# ***ԼԵԶՈՒ և ԽՈՍՔ***

Առաջին հայացքից պարզ թվացող հարցին, թե ինչ է լեզուն, միշտ չէ, որ բոլորի կողմից ընդունելի պատասխան է տրվել: Լեզուն գոյություն ունի հասարակությամ մեջ, հասարակության շնորհիվ: Չկա հասարակություն առանց լեզվի, և չկա լեզու առանց հասարակության: Եթե ոչնչանում է հասարակությունը,որը լեզվի կրողն է, ապա լեզուն դառնում է մեռած: Սակայն մեր լեզուն շատ ավելի ընդարձակ է, քան վերջին իմաստով ընկալումը: Այն որպես հասարակական երևույթ իրականացնում է գործառույթներ, որոնք պայմանավորված են ինչպես նրա առանձին միավորների գործառնական դերով, այնպես էլ ամբողջ լեզվի կիրառական ոլորտներով: Մարդիկ, միմյանց հաղորդակցվելով, փոխանակում են իրենց մտքերը, կամքը, տրամադրությունն ու հույզերը: Լեզվի արտահայտչական գործառույթն այն է, որ նա հանդես է գալիս իբրև մտքերի արտահայտման միջոց: Դա լեզվի այն ունակությունն է, որ խոսքի մեջ հանդես է գալիս որպես խոսողի զգացմունքների, հույզերի, ցանկությունների արտահայտման միջոց:Լեզուն մտածողության հիմնական միջոցն է, որն ապահովում է մտքերի նյութական ձևավորում ու տեղեկատվության փոխանակումը հանրության անդամների միջև:

Հաղորդակցումը մի գործընթաց է,որն ունի երկու կողմ. մի կողմից խոսողը, մյուս կողմից՝ լսողը, ընկալողը: Մարդիկ միմյանց հաղորդում են իրենց մտքերը, հույզերը, ապրումները, ցանկություններն ու ձգտումները,համակրանքն ու հակակրանքը և այլն՝ իրականացնելով այն մեծամասամբ լեզվի միջոցով, որով և լեզուն կատարում է իր հասարակական դերը՝ հաղորդակցման ապահովումը: Անշուշտ, լեզվի հասարակական հաղորդակցման դերն ու գործառույթը սրանով չի սահմանափակվում. այն ամբարում ու պահպանում է իր մեջ հասարակության գործունեության արդյունքները, հասարակական փորձն ու գիտելիքները փոխանցելով սերունդների փորձն ու գիտակցությունն

իրենց հաջորդներին: Տարբերակվում է հաղորդակցման բանավոր և գրավոր ձևեր: Յուրաքանչյուր տարբերակի համար բնութագրական են մի շարք հատկանիշներ, որոնց հիման վրա տարբերակվում են հաղորդակցման տեսակները:

Այդ հատկանիշներից են՝

**1. Հաղորդակցման պայմանները**

- ուղղակի կամ անմիջական շփում՝ինչպես ակտիվ,այնպես էլ պասիվ հետադարձ կապով,արձագանքով,
- անուղղակի կամ միջնորդավորված հաղորդակցում:

**2.Մասնակիցների քանակը**

- մենախոսություն,
- երկխոսություն,
- պոլոլիզ՝ մի քանի մարդու խոսք:

**3.Հաղորդակցման նպատակը**

- տեղեկացում,
- համոզչական գործունեություն,
- ժամանացային շփում:

**4.Իրադրության բնույթը**

- գործնական հաղորդակցում,
- առօրյա-խոսակցական, կենցաղային հաղորդակցում:

## ***«ԽՈՍՔ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»***

## ***ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ***

Աշակերտի անձի ձևավորման և զարգացման մեջ խիստ կարևոր նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը:Հայտնի է, որ աշակերտյի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում,երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին:

Երեխայի խոսքի զարգացումը,լեզվական հաղորդակցում ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի, շրջապատի հետ, հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են:

Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար մարդը պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի:Երեխան նախ շփվում է ծնողների հետ,այնուհետև նաև այլ մարդկանց հետ, սովորում է հաղորդակցվել համատեղ գործնեության ընթացքում:Այդ գործունեությունը կարող է լինել խաղ,ուսում, իր ուժերի չափով աշխատանք:Այդ ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը,հասկանում է, թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի գործունեության նորմերն ու կանոնները, այսինքն՝ հասկանում է, թե ինչպես կարելի է անել,թե ինչ կարելի է անել,իսկ ինչը՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել,որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն:

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում: Երեխան ծնված օրվանից արդեն կրում է մայրենի լեզուն: Կրտսեր դպրոցի խնդիրն է դառնում օգնել երեխային գրավոր և բանավոր խոսքը ճիշտ ձևակերպել, կարողանալ արտահայտել

իր հույզերը, զգացմունքները ու հաղորդակցվել: Մայրենի լեզվի ուսուցումը, որպես ուսուցման հիմնական լեզու, անընդհատ է ու սերտորեն կապված է սովորողի բնականոն, անկաշկանդ, ստեղծագործող,տրամաբանող, ազատ արժեհամակարգի ձևավորմանը:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների /գրել, կարդալ, խոսել, լսել/ ուղղությամբ կազմակերպված, համակարգված և նպատակամետ աշխատանքն է:

Այս դասաժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառութային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է կարողանա հայերենով հաղորդակցվել մեծահասակների և փոքրերի հետ, ընկալել ուրիշների խոսքը և արտահայտել սեփական մտքերը, կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստերը,գրավոր շարադրել պարզ տեքստերը,կարողանալ աշխատել համագործակցված, լինել թիմի անդամ,լինել նախաձեռնող:Պետք է կարողանա գիտակցել և արժևորել իր ազգային ինքնությունը,հարգել և ընդունել ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները,իմանա իր իրավունքներն ու պարտականությունները,պատասխանատու լինի իր արարքների

համար,ցուցաբերի հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ:

«Խոսք և հաղորդակցություն» առաջադրանքները ներկայացված են հետևյալ տեսքով՝

- Հաղորդակցություն
- Հաղորդակցության տեսակներ
- Բարեկիրթ հաղորդակցություն
- Խոսքային ժանրեր

# ***ՇՓՈՒՄ***

**Շփում** նշանակության փոխանցման գործողություն՝ հասկանալի նշանների կամ սեմիոտիկ կանոնների միջոցով, որը փոխանցվում է մեկ անհատից կամ խմբից մյուս անհատին կամ խմբին :

**Շփումը** երկու և ավելի մարդկանց համագործակցությունն է, որն ուղղված է փոխադարձ ըմբռնմանը, փոխ-հարաբերությունների հաստատմանը և զարգացմանը, միմյանց վիճակների, հայացքների և վարքի վրա փոխադարձաբար ազդելուն, ինչպես նաև նրանց համատեղ գործունեության կարգավորմանը:

## ***Շփում և հաղորդակցություն***

Հաղորդակցությունը, շփումը մարդկանց փոխազդեցությունն է, որի արդյունքում.

ա) շփվողները որոշակի տեղեկատվություն են փոխանակում՝ այդպիսով ճանաչում շրջապատող աշխարհը, մարդկանց, ինքն իրեն (տեղեկատվական – հաղորդակցական գործառույթ),

բ) պլանավորում և կազմակերպում են իրենց գործունեությունը՝ կարգավորելով սեփական և գործընկերոջ վարքը (հաղորդակցական – կարգավորող գործառույթ),

գ) ազդում/ներգործում են շփվողների հուզական-զգայական ոլորտի վրա (աֆեկտիվ – հաղորդակցական գործառույթ),

Առաջադրանքները ձևավորում և զարգացնում են.

- ✓ հաղորդակցվելու կարողություն

ա) հաղորդակցական խնդիրների լուծում,

բ) պատմությունների հորինում,

գ) հաղորդակցական իրադրություններում կողմնորոշվելու կարողություն,

դ) շփման խոսքային և ոչ խոսքային միջոցների տեղին օգտագործում

- ✓ .հաղորդակցությունը վերլուծելու կարողություն (հնարավոր տալ երեխաներին հասկանալ, գիտակցել հաղորդակցման դերը իր կյանքում, մտածել, վերլուծել շփման իր փորձը, խոսել դրա մասին, գնահատել հաղորդակցման իր կարողությունները, բարելավել դրանք):

Լավ կլինի, որ, բացի դասագրքի նյութերից, գործածվեն նաև այլ առաջադրանքներ:

Օրինակ՝ 1 – 2-րդ դասարաններ

## ***Մարդը չի կարող մենակ ապրել***

Երեխաների հետ խոսել եմ այն մասին, որ մարդը չի կարող ապրել մենակ, որ նա միշտ այլ մարդկանց հետ շփվելու, զրուցելու կարիք ունի: Եթե մի օր արթնանան և տեսնեն, որ մենակ են, կապի միջոցներ չկան, ոչ ոքի հետ չեն կարող շփվել, ինչպե՞ս կզգան իրենց: Կպատմեն, թե որոնք են միայնակ լինելու դրական և բացասական կողմերը:

Ընդհանրացնելով տպավորությունները, պարզում ենք, որ մարդիկ շփվում են, որպեսզի.

. ինչ – որ բան հարցնեն, իմանան,

. ինչ – որ բան հաղորդեն, ասեն, պատմեն,

. բարևեն, ողջունեն, հրաժեշտ տան,

. շնորհավորեն,

. բացատրեն կամ բացատրություն լսեն,

. օգնեն կամ օգնություն խնդրեն,

. իրենց ուրախությունը կամ տխրությունը կիսեն ընկերոջ հետ,

. պարծենան, գլուխ գովեն,

. մխիթարեն, հանգստացնեն և այլն:

3 - 4-րդ դասարաններ

Ինչպե՞ս ենք շփվում միմիանց հետ և ուրիշների հետ.

Երեխաների հետ զրուցել եմ այն մասին, թե մարդիկ ինչու և ինչպես են շփվում: Մենք ամեն օր խոսում ենք, լսում, գրում, կարդում, այսինքն հաղորդակցվում ենք մարդկանց հետ: Բայց միշտ չե, որ հաջողվում է: Երբեմն չենք կարողանում համոզել մեր զրուցակցին, որ ճիշտ ենք ասում կամ չենք կարողանում վստահ պատասխանել դասը, թեև սովորած ենք լինում: Երբեմն ամաչում ենք, ինքնավստահ չենք լինում, ու դա խանգարում է հասկանալ մեր զրուցակցին կամ այնպես անել, որ մեզ

հասկանան: Արդյո՞ք խոսելիս միշտ ենք հաշվի առնում, թե ում հետ, երբ, ինչ նպատակով ենք խոսում կամ գրում: Մարդիկ հաղորակցվում են որոշակի նպատակով, հարցնել, իմանալ, ճշտել, ողջունել, շնորհավորել, բացատրել, պարզաբանել, ուրախությունը կիսել:

Առաջին դասարանում երեխաներին առաջարկել եմ դպրոց բերել իրենց ընտանեկան լուսանկարներից, որոնք պատվերում են տոնախմբություններ, ծննդյան օրվա դրվագներ, դպրոցական առաջին օրվա լուսանկարներ և պատմել դրանց մասին:

Այս հնարքը մեծապես ընդլայնում է երեխաների խոսքի հնարա-վորությունները, քանի որ եթե դասագրքի լուսանկարի մասին նա գիտի միայն այն, ինչ պատկերված է, ապա ծննդյան օրվա մասին բազմաթիվ բաներ կարող է պատմել, որոնք <<կադրից դուրս են մնացել>>:

Բանավոր խոսքի զարգացման համար արդյունավետ կարող է լինել հետևյալ _առաջադրանքը՝ <<Օրը սկսենք բարի լուրով>>, <<Ինչ հետքրքիր բան եմ տեսել, լսել, իմացել, արել…>>, <<Իսկ դուք գիտե՞ք որ…>>:

Երեխաներին բացատրել եմ ամեն օր դպրոց գալիս կամ դպրոցից տուն գնալիս ոշադիր հետևել շրջապատին, գտնե հետաքրքիր, տպավորիչ սյուժեներ, դեպքեր, իրադարձություններ, որոնց մասին հետո պիտի պատմեն դասարանում:

Ամեն օր առաջին դասի 10-15 րոպեները տրամադրել եմ <<օրվա լուրերին>>, որի ընթացքում երեխաներից 5–6-ը կարող են պատմել իրենց նորությունները:

Կարևոր է շեշտը դնել նաև գրավոր հաղորդակցական կարողությունների զարգացման վրա: Այդ նպատակով երեխաներին առաջարկել եմ գրավոր ներկայացնել իրենց նորություններն ու լուրերը: Դրանք կարող են կոչվել <<հետաքրքիր լուրեր>>, <<գիտե՞ արդյոք>> և փակցվում են դասարանի <<Նորությունների

պատին>>: Ամեն շաբաթվա վերջում դասարանը քվեարկությամբ ընտրում է լավագույն լուրերը՝ ամենահետաքրքիր, ամենազարմանալի, ամենածիծաղելի, ամենահուզիչ և այլ անվանակարգերով:

Արդյունավետ հաղորդակցությունը երթադրում է նաև սեփական հույզերը ճանաչելու, կարգավորելու և կառավարելու, այդ մասին խոսելու, դիմացինի հույզերը ընկալելու, արաբերությունների մեջ դրանք հաշվի առնելու կարողություն: Մարդիկ շփվում են նաև իրենց ուրախությունն ու տխրությունը, հիացմունքմ ու զարմանքը, հրճվանքն ու ափսոսանքը, վախն ու անհանգստությունը և այլ հույզերն ու զգացմունքները կիսելու համար: Սեփական տրամադրությունը ճամաչելը, դրա մասին խոսելը, լավ կամ վատ տրամադրության պատճառները հասկանալը, վերլուծելը կօգնեն երեխաներին ավելի ուշադիր ու նրբանկատ դառնալ նաև ուրիշների տրամադրության նկատմամբ, այսինքն ՝ կդառնան ավելի արդյունավետ հաղորդակցվողներ:

Երեխաների հետ զրուցում եմ հետևյալ հարցերի շուրջ.

.Ամենից հաճախ ինչի՞ց է քո տրամադրությունը ընկնում, ինչի՞ց ես տխրում:

.Իսկ ի՞նչն է քեզ ամենից շատ ուրախացնում,

.Իսկ գիտե՞ս, որ մարդիկ հաճախ կարողանում են փոխել և իրենց և ուրիշների տրամադրությունը: Դու այդպես կարողանում ես:

.Ինչ ես անում, երբ բոլորովին տրամադրություն չես ունենում:

Ցանկալի է առաջարկել երեխաներին ամեն օր գնահատել դասարանի տրամադրությունը:

Հետաքրքիր է նաև զրուցել նրանց հետ այդ մասին:

Նկատե՞լ եք, որ երբ տրամադրությունը բարձր է, ամեն ինչ ասես ավելի լուսավոր ու

պայծառ է թվում: Իսկ երբ տրամադրություն չես ունենում, աշխարհն ել, ասես, գորշ ու մռայլ է թվում:

Դասարանում յոթնաթերթ մի ծաղիկ եմ պատրաստել տալիս, ծաղկի ամեն մի թերթիկ շաբաթվա մեկ օրը կխորհրդանշի:

Ամեն օր դասարանի տրամադրությունը համապատասխան գույնով ներկել ծաղկի մեկ թերթիկը: Մեկ շաբաթ անց կտեսնենք, թե ինչ գույներ կունենա ծաղիկը: Դա կլինի տրամադրության փոփոխությունների մեկ շաբաթվա ներկապնակը:

Աշխարհում շատ բաներ կան, որոնք սիրում ենք կամ չենք սիրում: Առաջարկում եմ կազմել աղյուսակ և լրացնել հետևյալ նախադասությունները.

ա) Ամենից շատ սիրում եմ, երբ…

բ) Ինչ լավ է, որ…

գ) Ամեն ինչ հրաշալի է, երբ…

դ) Ամենից շատ չեմ սիրում, երբ…

ե) Շատ տխուր բան է, երբ…

զ) Տխրում եմ, երբ…

Բարեկիրթ ձևով օգնություն խնդրելը, օգնություն առաջարկելը կամ օգնություն ընդունելը նույնպես կարևոր կարողություններ են:

Օրինակ՝

. Անծանոթ վայրում անծանոթից հարցրու քեզ անհրաժեշտ հասցեն:

. Խնդրիր ավագ քրոջդ օգնել քեզ ՝ տնային հանձնարարությունը կատարել:

. Քո օգնությունն առաջարկիր ընկերոջդ դժվար առաջադրանքը կատարելիս կամ ծեր կնոջը փողոցն անցելիս:

. Հյուրասիրիր սեղանի շուրջ նստած հյուրին՝ առաջարկելով այ կամ այն ուտեստը:

Թերթերն ու ամսագրերը հատուկ էջեր են ունենում, իսկ հեռուստատեսային հատուկ ժամեր կան, որոնք նախատեսված են

գովազդներիու հայտարարությունների համար: Ի՞նչ է գովազդը: Երբ որևէ իր կամ մթերք գովազդում են, ասում են նրա լավ հատկանիշները, որպեսզի մարդիկ ցանկանան գնել այն: Իսկ հայտարարություններում մարդիկ բոլորին հայտնում են այն մասին, թե ինչ են առաջարկում, ինչ են ցանկանում, ինչ են գտել կամ կորցրել, ինչ են ուզում վաճառել կամ գնել:

Հետաքրքիր է առաջարկել գրել գովազդ դպրոցի մասին, որը կարդալուց հետո բոլոր երեխաները ցանկանալ գալ այդ դպրոցում սովորելու:

Գովազդում պետք է հետաքրքիր ու գրավիչ ներկայացնել գովազդվող առարկայի առավելությունները: Վերնագիրն էլ պետք է գրավիչ ու հետաքրքիր լինի: Օրինակ՝ Աշխարհի ամենալավ դպրոցը:

***<u>Հաղորդակցության տեսակները</u>***

Մարդիկ շփվում ու հաղորդակցվում են տարբեր ձևերով՝կախված հաղորդակցության նպատակից, տեղից, ժամանակից և հասցեատիրոջից: Ըստ այժմ լինում են.

.խոսքային կամ ոչ խոսքային,

.բանավոր կամ գրավոր,

.միջանցնային կամ զանգվածային,

.մտերմիկ կամ գործնական, պաշտոնական,

Խոսքային կամ ոչ խոսքային հաղորդակցություն

Մտքեր, ասելիք, հույզեր ու զգացմունքներ կարելի է հաղորդել և ընկալել ոչ միայն բառերով:

Օրանակ՝ Ինչպես ճանաչել տրամադրությունը

Առաջարկում եմ մտածել այն մասին, թե ինչպես են հասկանում իրենց շրջապատող մարդկանց տրամադրությունը, նույնիսկ եթե նրանք այդ մասին չեն խոսում:

Օրինակ՝ Ինչպես և ինչի՞ց ես հասկանում, որ մայրիկը (հայրիկը, եղբայրը, ուսուցիչը և այլն) բարկացած է (ուրախ է, տխուր է և այլն):

Երեխաները կարող են ասել. <<Երբ մայրիկը ափսեները լվանալիս բարձր չխկչխկացնում է, ուրեմն բարկացել է>>, <<Երբ քույրիկը փակվում է իր սենյակում, ուրեմն տխրել է>>, <<Երբ հայրիկը տուն մտնելիս քթի տակ երգում է, ուրեմն տրամադրությունը բարձր է>>:

## ***Բաժանիր ժպիտդ ամենքին***

Կարելի է այսպիսի զրույց անցկացնել. «Ձեզ դու՞ր է գալիս, երբ մարդիկ ժպտում են: Իսկ դուք հաճախ եք ժպտում մարդկանց: Գիտե՞ք որ ժպիտը գեղեցկացնում է բոլորին: Փորձեք նկատել ձեր ժպիտը»: Նկարելուց հետո վերլուծում են և պարզում «Ժպիտը փոքրիկ արևի է նման:Իսկ գիտե՞ք, որ ժպիտից կարող է ընկերություն ծնվել: Հայտնի «Ժպիտը» երգում ասվում էր, որ ժպիտից մռայլ օրը կարող է լուսավորվել, և երկնքում ծիածան է ծնվել, ժպիտի շնորհիվ անձրևը կդադարի և անտառը ուրախ կծափահարի, ժպիտից բոլորը ջերմանում են»:

Հանձնարարություն. Էլ ինչ կարող է ծնվել ժպիտից

.Փորձիր ասել, թե ինչի՞ է նման մայրիկիդ կամ ուսուցչուհուդ ժպիտը:

Պատկերացրու, որ մի օր արթնացել ես, ու պարզվել է, որ չես կարողանում եմ ժպտալ, ո՛չ ծիծաղել, քանի որ «կորցրել ես ժպիտդ»: Ի՞նչ կլինի, ինչպե՞ս կապրես: Հեքիաթ հորինիր կորած ժպիտի մասին:

. Փորձիր մի այնսպիսի նկար կամ ծաղրանկար նկարել, որ խոսքերի կարիք չունենաս:

. Նկարել քաղաք՝ իր ցուցանակներով: ցուցանակները կարող են լինել բառերով և խորհրդանշան-նկարներով:

## ***Բանավոր և գրավոր հողորդակցություն***

Երեխան դպրոց է գալիս հիմնականում մայրենի լեզվի բանավոր խոսքին ազատ տիրապետած և դպրոցում պետք է զարգացնի այն, ինչպես նաև տիրապետի գրավոր խոսքին: Երեխաներն արդեն գիտեն, որ բանավոր խոսքը հաղորդակցության միջոց է , դրանով շփվում և հաղորդակցվում են շրջապատի հետ: Նրանք հասկանում են նաև գրի կարևորությունը, բայց պետք է , որ գան նաև դրա անհրաժեշտությունը: Գիրը միայն այն ժամանակ է իմաստ ձեռք բերում, երբ բանավոր խոսքով հաղորդակցվելու հնարավորություն չկա, երբ անհրաժեշտ է «խոսել» նրանց հետ, ով հեռվում է: Թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի յուրացումը ոչ միայն ուղղագրություն, բառեր կամ քերականական գիտելիքներ պիտի հաղորդի երեխային, այլ նախ և առաջ զարգացնի նրա բանավոր ու գրավոր հաղորդակցական կարողությունները:

Հանձնարարություն

Պատկերացրու, որ մի ամառային լուսնյակ գիշեր արթնանում ես և տեսնում, որ քո սենյակում մի այլմոլորակային է հայտնվել : Նա շատ համակրելի է և, որ զարմանալի է, հրաշալի խոսում է հայերեն: դուք իհարկե, ընկերանում եք, և նա քեզ առաջարկում է մի «փոքրիկ» տիեզերական զբոսանք կատարել: Դու չես ուզում մայրիկին արթնացնել և փոքրիկ նամակ-գրություն ես գրում, որ նա չանհանգստանա: Ի՞նչ կգրես:

## ***Բարեկիրթ հաղորդակցություն***

Բարեկիրթ շփման, հաղորդակցության կարողությունների զարգացումը տարրական դասարաններում մի քանի խնդրի լուծում է ենթադրում.

. տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը,

. իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ,

. կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան: Իմ հանձնարարությամբ երեխաները թվարկում են ողջույնի, բարևի իրենց իմացած խոսքերը, բառերն ու արտահայտությունները: Դրանք գրում են գրատախտակին և փորձում են տարբերակել, թե դրանցից որը երբ, ում և ինչ իրավիճակում է ամենից հարմար ասելը:

## ***Հանձնարարություն***

Լրացնել աղյուսակը

| | |
|---|---|
| Ինչ ես ասում | Ում ես |
| ողջունելիս | ողջունում |

Կարդալ «Ծնորհակալությունը ներեցեքը խնդրեմը» հեքիաթը և քննարկել

ա) Ե՞րբ և որ իրավիճակներում ենք օգտագործում այդ բառերը:

բ) Ինչպե՞ս պետք է արտասանել այդ բառերը:

գ ) Արտասանեք դրանք տարբեր հնչերանգներով և պատկերացրեք արձագանքները: դ ) Կազմեք երկխոսություններ և դերերով ներկայացրեք դրանք

## ***Քաղաքավարի, բարեկիրթ, բարեհամբույր***

Բարեկիրթ խոսքի առանձնահատկություններից է նաև քաղաքավարական տարրեր գրություններ գրելու կարողությունը:

Ստեղծում եմ տարբեր իրավիճակներ ստեղծել, որտեղ երեխաները ներողություն խնդրեն, ներկայացնեն իրենց կամ ընկերներին, ինչ-որ տեղ հրավիրեն , ընդունեն կամ մերժեն հրավերը, բարեկիրթ ձևով ցավակցեն կամ մխիթարեն՝ ճիշտ ընտրելով տոնը:

Կարելի է գրական տեքստերից ընտրել որոշակի հատվածներ, որտեղ կան բարեկիրթ խնդրանքի և պահանջի, նույնիսկ սպառնալիքի դրվագներ:

Օրինակ՝ Հ. Թումանյանի <<Չարի վերջը>> ստեղծագործությունից մի փոքր դրվագի ներկարարում.

-Կու՛ կու՛ , կու՛ կու՛ իմ կուկուներ,
Ե՞րբ պիտի դուք առնեք թևեր,
Թռչե՛ք, գնա՛ք
Ուրախանա՛ք…

## ***Խոսքային ժանրեր***

Այս բաժնում անդրադառնում են ոչ թե գեղարվեստական գրական, այլ իրական խոսքում օգտագործվող ժանրերին (խնդրանք, հրաման, հրահանգ, դիմում, նամակ և այլն):

Այս բաժինը իր մեջ ներառում է հետևյալ կետերը.

- Տեքստ, նրա առանձնահատկությունները,
- Տեքստի տեսակները, պատմողական, նկարագրական , դատողական,

- Խոսքային ժանրեր (ուսումնագիտական առօրեական, գեղարվեստական խոսք տարրերով, լրագրական ժանրեր):

Տեքստը, ընդհանուր թեմայով, հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է: Որպես կանոն այն ունենում է վերնագիր, որն արտացոլում է հիմնական միտքը:

***<u>Պատմողական</u>***

Տեքստի այս տեսակին երեխաներն արդեն ծանոթ ենք, թեև ամեն անգամ, երբ հանդիպում ենք դրան, կարելի է նորից հիշեցնել:
Այդպիսի տեքստերում պատմվում է դեպքերի , հերոսների արարքների մասին:
Պատմությունը տեքստի տեսակն է:
Այսպիսի տեսակին հանդիպում ենք հեքիաթներում, պատմվածքներում:

***<u>Նկարագրական</u>***

Այսպիսի տեքստերում նկարագրվում են մարդիկ, բնությունը, առարկաները:
Այդպիսի տեքստերի տեսակին հանդիպում ենք կարդալով հեքիաթ, պատմվածք, հանելուկ, հայտարարություններ, գովազդ և այլն:

***<u>Դատողական</u>***

Այն տեքստերն են, որոնցում հիմնականում բացատրվում են դեպքերի, երևույթների պատճառները, ապացուցվում է ինչ-որ բան:

- Ես ուշացա, որովհետև քնած էի մնացել:
- Ես բարկացա, որովհետև ինձ վիրավորել էին:
- Ես անտառ չեմ գնա, որովհետև հյուրերի եմ սպասում:

Որպեսզի երեխաները ավելի լավ պատկերացնեն տեքստի կառուցվածքը կարելի է հանձնարարել կազմել տեքստ՝ հետևելով աղյուսակի պահանջներին

| **Տեքստ** | **Հատկանիշ** |
|---|---|
| | Վերնագիր |
| | Անցում հիմնական հարցին |
| | Բանալի բառեր և նախադասություններ |
| | Ավարտ կամ վերջին նախադասություն |

## ***Պատմվածքների հորինում***

Սա առաջադրանք է երեխաների համար, ովքեր ուզում են պատմություն գրել սովորել:

Յուրաքանչյուր երեխա կարող է օգտագործել օրագիր կամ նոթատետր:

Կարելի է ցույց տալ նոթատետրը ինչ-որ մեկին՝ ուսուցչին, ընկերոջդ, մայրիկին կամ հայրիկին:

Ինչի մասին գրել

Նոթատետրում կարելի է գրել

- Այն մասին, թե ինչ է տեղի ունենում դպրոցում,
- Ի՞նչ եք սիրում ընկերների հետ անել:

## ***Պատմություն հորինի՛ր և ձևավորի՛ր***

Պատմություն գրելիս շատ կարևոր է, որ աշակերտը կարողանա պատմել այն մասին, թե ինչ է զգում

- Գոհ - տխուր
- ուրախ - վախեցած
- երջանիկ - զայրացած
- զարմացած - ափսոսանքով:

Հեքիաթի կամ պատմություն գրելիս հարկավոր է,որ երեխան ծանոթ լինի հեքիաթի,պատմության պլանին պլան.

Սկիզբ – 1. Ովքե՞ր են պատմության գործող հերոսները: Որտե՞ղ է տեղի ունենում պատմությունը:

Ընթացք – 2. Ո՞րն է խնդիրը

Ավարտ – 3. Ինչպե՞ս է խնդիրը լուծվում

Այսպիսով խաղերը բազմաթիվ են, բազմաբնույթ, որոնք մեծ հնարավորություն են տալիս դասը անցկացնել հետաքրքիր, բովանդակալից, միևնույ ժամանակ աննկատ ուսուցանելով երեխաներին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվող և զարգացող հաղորդակցական ունակությունների վերաբերյալ առկա տեսական և գործնական մոտեցումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հաղորդակցական ունակությունների ձևավորման աստիճանը ազդում է ոչ միայն երեխաների կրթության արդյունավետության վրա, այլ նաև նրանց սոցիալականացման և անձի ամբողջական զարգացման վրա: Հաղորդակցումը ինքնին հանդիսանում է աշակերտների բազային հատկանիշներից մեկը, որը մի կողմից ապահովում է ուսման մեջ հաղորդակցման գործընթացի արդյունավետ ընթացքը, իսկ մյուս կողմից՝ ձևավորվում և հղկվում է արդյունավետ ուսումնական գործընթացի ընթացքում:Հաղորդակցական գործընթացի զարգացման առավել արդյունավետ շրջան է համարվում դպրոցական տարիքը: Հաղորդակցումը մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականի հոգեկանի ձևավորման, նրա՝ որպես անձնավորություն զարգացման, ողջամիտ և բարոյական վարքի կայացման գործում:Կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցումը մեծ ազդեցություն ունի կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի, ինքնահաստատման, սեփական ինքնագնահատականի գիտակցման, ինչպես նաև դպրոցական միջավայրին արագ հարմարեցման/ադապտացիաի/ գործում:Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների զարգացման համար առանձնահատուկ է մեծահասակների հետ հաղորդակցումը:

Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխաների ուշարությունը, օգնում ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային, որովհետև խաղալիս երեխան իրեն ազատ է զգում: Խաղի ուսուցողական խնդիրը նրանց գաղտնի է մնում, և երեխային թվում է, թե ինքն ուղակի խաղում է՝ կատարելով որևէ դեր: Խիստ կարևորում եմ ուսուցողական և կրթադաստիարակչական նշանակությունն ու արժեքը: Այն նպատակային ու ստեղծագործաբար կիրառելու դեպքում կարելի է բարձր ուսումնական արդյունքների հասնել: Խաղն ակտիվացնում է ուսումնական ամբողջ գործընթացը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջ. Գյուլամիրյան, Կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան 1998թ.

2. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարացման գործում՝, Նախաշավիղ՝, Երևան 2010 N6

3. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, ՝Նախաշավիղ, ՝ Երևան 1.2013

4. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չոփորոշիչներ և ծրագրեր